ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

19 դեկտեմբերի 2017թ. թիվ 309

ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՈՐՈՇ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով, «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետով, 22-րդ հոդվածի 10-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի զեկուցագիրը և հաշվի առնելով, որ մարզպետարանի ապարատի 2017թ. պահպանման ծախսերի «Աշխատավարձ և աշխատավարձին հավասարեցված այլ վճարներ» հոդվածում առկա է տնտեսում՝

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

Մարզպետարանի կողմից իրականացվող աշխատանքների կոորդինացման և մարզպետարանի առջև դրված խնդիրների իրականացման գործում որակով և ակտիվ աշխատանքի համար ՀՀ Լոռու մարզպետին, մարզպետի տեղակալներին և մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին պարգևատրել դրամական պարգևով՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 19
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2017թ. դեկտեմբերի 19-ի
թիվ 309 կարգադրության

Պարգևատրվողների ցուցակ

	Ազգանուն	Անուն	Գումար /դրամ/
1	Նալբանդյան	Արթուր	238104
2	Դարբինյան	Արսեն	190483
3	Թադևոսյան	Հովհաննես	190483
4	Բադոյան	Տիգրան	190483
5	Սարգսյան	Նարեկ	170721
	Ընդամենը		**980274**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ն.ՍԱՐԳՍՅԱՆ